ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 42

.

ք. Մարալիկ 16 ապրիլի 2012 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ԱԼԲԵՐՏԻ ԲՐՈՒԴՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Գագարին փողոցի N 19 հասցեի բնակիչ Արմեն Ալբերտի Բրուդյանի 11.04.2012 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմեն Ալբերտի Բրուդյանի կողմից ք. Մարալիկ Թումանյան թողոց 2-րդ նրբանցք N 87 հասցեի հողամասում 1992 թվականին կառուցվել է բնակելի տուն, սակայն սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել, միաժամանակ օրինական հատկացված 0.06 հա հողամասի փոխարեն փաստացի օգտագործվում է 0.0580 հա հողամաս, ուստի ղեկավարվելով □Տեղական ինքնակառավարման մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, □Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տների կարգավիճակի մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարալիկ քաղաքի բնակիչ Արմեն Ալբերտի Բրուդյանի (ծնված 08.11.1972 թվականին) կողմից 1992 թվականին ք, Մարալիկ Թումանյան փողոց 2-րդ նրբանցք N 87 հասցեում կառուցված բնակելի տան գույքային իրավունքները վերականգնել և ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի Անիի սպասարկման գրասենյակ ՝ պետական գրանցում կատարելու նպատակով:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ